

ԻՆՔՆԱԿԵՆԱԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՐՈՎԱԲԵ ՎՐԴ. ՍԱՄՊՈՒԷԼԵԱՆԻ

1894 Յունիսար 7, Ուրբաթ, ողջութեամբ երաւաղէմ վերագրձաւ կ. Գոյսէն Յ. Յարութիւն Պատրիարքը իրեն հետ եկան նու Տ. Մկրտչի Արքեպօս Վեհապետան (երբեմ Առաջնորդ Առանայի) իր աքսոր, նու Տ. Գէորգ Շ. Վրդ. երեցեան, Այս վերջինը քանի մը շարաթեն վերագրձաւ ի կ. Գոյսէն, ուր կը վորէր երաւաղէմի Փոխանորդին օգնականի պաշտօնը:

Երաւաղէմի մէջ աքսորական Տ. Եղիշիկ և Տ. Մկրտչի Եպիսկոպոսներ ազատ ուեցան և 1895 Մարտ 15/27 Դշտ մէկնեցան Երաւաղէմէն գէպ ի կ. Գոյսէն:

(Մկրտչի եպս. վախճանեալ ի Մարտ 1910, Մայիս 22ին, Եղիշիկ եպս. վախճանեալ կ. Գոյսէն, 1913, Փետր. 26):

Նոյն ապրին (1895 Նոյ. 7, Գշ.) Երաւաղէմ եկաւ իրեն հրեա Զեյթունցի Տ. Կարապետ Եպս. Քէչէսան, ոյք բարերարոյ և ազնիւ:

1896 Փետր. 10, Շարաթ գիշեր, Երաւաղէմ աքսորուեցաւ Կարնոյ Առաջնորդ Յ. Հետնդ Եպս. Ծիժանեան և բնակութեան համար Բերդղենէմ զրկուեցաւ:

Սարկաւագութեան երեար ապրիները անցուցի Ս. Յակոբի Վանքին մէջ, Տէյրմէն-Թազ անենակի մը մէջ:

Վարժարանէն ելլիելո յետոյ, Փեր Գևոններու Ս. Յովակիմ-Աննոյի վանքին մէջ երեւն ինձ Ֆրանսերէն գառ կու առ նոյն միաբանութենէն Փիէս Գաբրորէ անունով վարդապետ մը, որ վանցին մէջ միանդամայն երաժշտութեան և նուագի նուացի երա:

Նոյն միջացներուն Երաւաղէմ կը գտնուէր Դամինիկեան վարդապետ մը՝ Փիէս Ժագ-Ռէնորէ անունով, որ երեար ապրիներ Արենելք (Մուսուլ, Վան և լին.) գոնըւած և ըստ բաւականին սովորած էր արեկելեան լիզուներ - Հայերէն, Թուրքերէն, Արարերէն, Երրայերէն, Մասնաւորաբար յարարերութեան մէջ էի ոյդ վարդապետին հետ:

Մեր Միաբանութենէն ներս ամենէն ժամերիմ էր Տ. Եղիշէ Վրդ. Զիշինկիրեան:

Պուլկարիոյ Ռուսնութ քաղաքին մէջ բարեկամ մը ունէի, Նշան Մարգիսեան Թորոսնեց անունով: Անոր հետ յառաջուց թղթակցեցանք և ամէն ինչ կարգագրեցինք: Նա զիս իր անձնական ծախսով ժընէվ համալսարան մը պիտի ցըկէր: Այդ համակը ներկայացուցի Յարութիւն Պատրիարքին և Տնօրէն Ժողովին: Հետևաբար արտօնութիւն տուին ինձի գնալու ժընէվ: Միայն թէ ժամանակի քաղաքական կառութեան պատճառու, իրենք պաշտօնապէս կամ արտաքնապէս զիտիսի զիտնային իմ (ժընէվ երթալս, ոյլ կ. Գոյսոյ համար անցագիր պիտի հանէի և վզդիրէն - էրը թէ - պիտի մէկնէի գէպի Մարսիլիա:

Այս ամէն ձևակերպութիւնները կատարելէ յետոյ, 1896 Մայիս 21, Գշ. առաւազոյ, մէկնեցայ Երաւաղէմէն, ինձ սւզեկից էր Մանիսացի Կարապետ Գոլճեան (յետոյ Տ. Յակոբ Բէնյ.) անուն Միաբան մը, որ Փառանդաւորաց Վարժարանի կառավարչութեան պաշտօնէն և Միաբանութենէն նոր Երաժարան էր: Եպս. մը (Զեյթունցի Կարապետ Մրացան), վարդապետներ, արքաւագնիկ, գպիրներ և միաբաններ մինչև կայարան ողջերթի եկած էին: Յու կէս ժամէն հասանք Ցոպպէ: (Հոգեկառով), ուր օդափոխութեան առթիւ կը գտնուէր, Տ. Յարութիւն Պատրիարք և կառով), ուր օդափոխութեան առթիւ կը գտնուէր, Տ. Յարութիւն Պատրիարք և

աեղույն տեսուչն էր Տ. Գրիգորիով Վրդ. Պօյանեան. Ա. Պատրիարքը, որ անկազնոյ մէջ կը մնար, զիս իր ներկայացմէնց ինցունեց և մէկ ժամու չսփ զանազան գէպացներ պատմեց իր յեմերիկա և յայլ տեղիութքուն նողերութիւններէն, և Մնաք բարովց ըսինք Տեսչին, Ժամարար Տ. Մկրտչի Վրդ. Մարդարեանին, հիւր Յովհաննէս Վրդ. Խիկցեանին, Յովաէփ Վ. Սոզամնեանին և Միարածներուն և նոյն օրը նըստանք Աւատրիական Լոյսի ընկերութիւն էխութերօշ շոգենաւը, որ (ը. Բ.) ժամը 10ին մէկնեցաւ Յօվաէփի նաւանանդոտէն և գիշերուան ժամը 2ին հասանք Հայֆա, բայց դուրս չելայ - շագենաւը շամու չսփ մնաց Հայֆայի տաշի և յետոյ ճամարան շարունակելով առաւտուն կանուխի հասանք Պէյրութ. Առաջին անկամ կը տեսնէի Սուրբիոյ համբաւառոր նուահանդիսուր, կուրս ելայ և աւզզակի ազգային վանքը գնացի; Առ անշաշական պատմոն կը վարեր Տ. Մատթէոս Վրդ Գայրզճեան, յետոյ այցելեցի մի քանի ծանօթ ազգայիններու առանձին և Մթերանոցները և կեսորացի Համբաւառութ էփ. Մոսերեկանի ընկերակցութեամբ կացինք «Քըստըշըլը» անուամբ ծանօթ անտառակըր, և երեկոյեան գէմ շոգենաւ կերպարձայ, առ ուշ ատեն մէկնեղ տղի առաւն կանուխի Թարապալուս (Շաման), ուր երկու ժամ մնացինք, բայց դուրս չելայ - Շագենաւը նոյն օրը մէկնեցաւ և կէսօրին հասու իսկէնտէրուն, Դուրս ելլելով տեսակցեցայ տեղույն Հովի Տ. Ներսէս Վրդ. Գայիէկեանի հետ և մի քանի կեսարացիններու (Մ. Կիւլպէնկանի և Թ. Քէշիէկանի) մթերանոցները այցելեցի: Նոյն երեկոյ մէկնեցանք իսկէնտէրունէն և հետեւաք առաւս հոսանք Մէրսին (Մայիս 24, Ուրբաթ):

Յօվաէփէն առմասակա թէպէտե իզմիրի համար առած էի, բայց շոգենաւի մէջ առապայման բազմութիւն կար, որոյ հետեւաք անհանդասութիւնն է Մէրսինի հայրենակիցները տեսնալու վափաքը մղեց զիս Մէրսին դուրս երլաւու, թէպէտե խոնեմութիւն չէր, որպէսուե հայկական ինդրոյն ամեննէն դէմ միջոցն էր և ես իրը երիտասարդ և կրօնաւորի տարապակս ուղագրութիւն կը հրաւիրէի իմ վրաս. Բաւական դժուարութեամբ (իրը հիւանդացած) դուրս ելայ և հիւրընկալուսեցայ ընիկ թուլացի Յարութիւն Աղա Սթանզուեանի առժամեաք ընակարանը Յարութիւն Աղա բաւական բարեկեցիկ էր և լու գիրք ունիր Տարսոսի մէջ: Այն օրերը կատորածի վախէն, ուրիշ ազգոյիններու նման առժամապէս Մէրսին փսխագրուած էր, ուր համեմատաբար աւելի պայանզութիւն կար: Յիշեալ ազգայինը 1909ի Կիլիկեան կառորածին ի Տարսոս իր առ մէջ սպաննուեցաւ:

Մայիս 25, Եր. երեկոյ և կիր. 26 Մայիս (Տօն Եկեղեցւոյ), Մէրսինի Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին արտարզութեան ժամանակցեցայ և շատ մը թալասցիներէն զառ այցելեցի նաև Մէրսինի կֆ. Սէլենանին, որոյ երկու երիտասարդ զաւակները (և իմ դպրոցական Թալասի ընկերներու) Միասք՝ 27 տարեկան և Յարութիւն՝ 25 տարեկան, նոյն օրերը վախնանած էին - առաջինը Մէրսին, երկրորդը կ. Պոլիս - , ի խոր սուր համակելով իրենց ծնողքը:

Հետաքրքրութեամբ և մի քանի ծանօթներու և բարեկամներու այցելելու փոփաքանօք և անխոնէմութեամբ Մէրսինէն (կիր. օրը) շոգենաւովով ճամբարայ ելայ դէպի Տարսոն, ուր կը գտնուէր մէկ Սաղիմական բարեկամս, Սամուէլ կֆ. Արիկեան (ընկէ Ատանացի): Քաղաք հասնելով՝ պատահմամբ, թաղոքականաց ժողովարանը ժամայ, ուր պաշտամունք կը կատարուէր, ուր հանդիպեցայ Սամուէլ կֆ.ի: Նոյն երեկոյ հիւրընկալուսեցանք իր տունը, ուր իր սոր ամուսնացած եղբօրը (Նազարէթի) հետ միասին կը ընակէր և եղբօրմէն մասունքօզութիւն կը սորվէր: Հետեւեալ օրը Սամուէլ կֆ.ին հետ միասին սկսանք շրջագայիլ զանազան եկեղեցիներ և դպրոցներ, ինչպէս նաև Հայոց նշանաւոր պատմական գերեզմանատունը, որ ըստ հմանց իր մէջ կը պահ Սթարդանարզի շիրիմը են:

Երկու երիտասարդներու հետաքրքրական պայտաները տեղական կառավարուական ուշադրութիւնը կարւիրեցին մեր վրայ, և ես Կրտսերուեցայ կառավարութեան

գուշը, ուր նախ փօխս առյօթեսին և յեղաց Գայմագամին առջև երկայնապատճեն հարցաքննութեան ենթարկուեցայ, և պատուաւոր երաշխաւոր մը տալով մեկնեցայ կառավարչատառնէն: Հետեւալ օրը Մէրսին զերադասնալով, թալասցի Գանձապետեան Մ. Գարբրիէլ էֆ.ին տունը մնացի և յաջորդ տաւած, ընդ հսկողութեամբ փօխսի մը, շաղեկառով մեկնեցայ գէպի Մէրսին և առաջնորդուեցայ ուղղակի կոռագարաքթեան գուշը, ուր շարունակուեցան Տարոնի երկայնապատճեն հարցաքննութիւնները փօխս առյօթեսին և միրեկարևմ փաշայի ներկայութեան և վրաս խուզարկուեցաւ: Ենոյ կեսարացի պատուաւոր ազգայինի մը երաշխաւորութեամբ ազտա արձակուեցայ, առաջին շողենալով քաղաքին մեկնելու պայմանաւ:

(Այստեղ փակագծի մէջ ըսեմ, թէ Երրապայէն զերագարձիս իզմիր երբ բանադարկուեցայ, կառավարութիւնը գրաւեց բոլոր թուղթերս և տեղակներս, որոնց մէջ էր նաև ուղենորութեան օրագիրը:)

Թանի մը օր միայն մետքի Մէրսին և առաջին պատահած շողենաւը — Տէլլէնական, «Էլզմիր» — մտայ: Շոգենաւը պղտիկ էր և բազմութիւնը յատ: Ճամբորդներու մեծագոյն մասը կատագած և կոտարածներէն նոր գուրս ելած տաճիկներ էին, Առաջին օրէն ևս ինքզինքն Յոյն ձեւացուցի: Բովս յունացիր թուրքերէն Յովսէփ Գեղեցիկի պատմութիւնը կար, շարունակ զայը կը կարդայի:

Շոգենաւը Մէրսինէն մեկնեցայ և հետեւալ առաւտ իսկէնտէրուն հասաւ: Ուր գուրս չելայ: Նոյն երեկոյ մեկնեցանք իսկէնտէրունէն և առանց Մէրսին հանդիպելու՝ երկու օրէն հասանք Աստալիս, ուր օր մը մնացինք և Գանիայի կուսակալութիւնէն բազմաթիւ թուրք ճամբորդներ հասան:

Մեր շոգենաւը եօթը օրէն ողջութեամբ հասաւ իզմիր:

Ես ուղղակի Գարաթաղ զնացի և հիւրընկալուեցայ մեր հեռաւոր ազգականներէն Արթին Աղա Խմբիկանի տունը:

Մէկ շաբաթի շափ իզմիր մելքէ և Առաջնորդին (Ներսէս Ռ. Վ. Արսլանեան) և զանազան հաստատութիւններու մօտ կենալէ եսք, Ֆրանսոսկան շոգենաւը մեկնեցայ և երկու օրէն ողջութեամբ հասայ կ. Պոլիս և տամաք ելայ Ղարաթիա, ուր նաև ամսատուցին մէջ պաշտօնեալ մը տաւ անցագիրս և նուժուսի թուղթս և նշանակեց բովը թէ մուր պիտի ընակիմ: «Փուլմաքրու», Պատրիարքութանի քով երաւազէմի Փոխանորդարանը դրել տուի, հետք կորսաննելու համար:

Գրեթէ երկու ամիս մնացի Գոտու-գիւղի: Այդ միջոցին շատ քիչ անդամ գուրս կ'ելէի: Հազիւ երկու անգամ Պոլսոյ կողմը անցայ: Մի անգամ շոգենաւին մէջ հանդիպեցայ Մէլքիսէթէկ Արքեպիս: Մուրատեանին և կէս ժամու շափ տեսակեցայ հետք, մինչև որ կամուրջը հասանք (այն միջոցին Գատը-գիւղի քարոզիչը Մամբրէ եպա-ն էք):

Օգոստ. 14, Դշ., պատահեցաւ Օսմ. պանքայի գէպքը, որոյ բոլոր մանրան մասնութիւնները հասան մեզի նոյն երեկոյ: Բազմաթիւ հայեր ապաստանեցան օտար հասաւառութիւններ, օրինակ՝ Գատը-գիւղի Լատինական եկեղեցին և Ֆէնէրպահէկի հասաւառութիւններ, Ֆրէնսինը դպրոցը ելն: Բայց Տէլի Ֆուտա Փոշան պաշտպանեց Ակիւտարը և Գատը-գիւղը և այն կողմերու հայերը շվասաւեցան:

Ֆէնէր պախչէն դիմեցինք թէ ինչպէս Մարսիլիտ երթալիք Ֆրանսական (Մէսամբըրիի) շոգենաւը մեր կողմը եկաւ և Գալամըշի առջև խարսիսց, ուր յեսոյ (Մէսամբըրիի) շոգենաւը մեր կողմը եկաւ և Գալամըշի առջև խարսիսց, ուր յեսոյ Այս պարքը և պատահեան պանքան մտնող Դաշնակցական հայ-յեղափախականներ: Այս պարքը գրգռեց Սուլթան Համբիրին կատաղութիւնը ապրոբախտ հայ ազգին դէմ:

(Նարունակելի 3)